11055

... ԿԵՆՏԿՈՄԻՆ ԿԻՑ
... ԿԵՆՏԲՅՈՒՐՈ

Б... ...КА
ИН...ИТУТА
...ТОКОВ...ЕНИЯ
...адемии Наук
СССР

# ՊԻՈՆԵՐԱԿԱՆ ՖՈՐՊՈՍՏԸ ԴՊՐՈՑՈՒՄ

3кюп
Դ-62

ԵՐԵՎԱՆ
1928 Թ.

1928 № 499
3КЮП
Կ-62
Մ
Ca 2579
21 SEP 2006
1 DEC 2009

Հ. Լ. Կ. ՅԵ. Մ. ԿԵՆՏԿՈՄԻՆ ԿԻՑ
ՊԻՈՆԵՐԱԿԱՆ ԿԵՆՏԲՅՈՒՐՈ

# ՊԻՈՆԵՐԱԿԱՆ ՖՈՐՊՈՍՏԸ ԴՊՐՈՑՈՒՄ

ՅԵՐԵՎԱՆ
1928 Թ.

ՀՍՍՌ-Арм ССР

22 JUL 2013
11055

Գրաուեպվար № 475 բ.
Հայպոլիգր. I տպ. պ. № 864, տ. 3000

ՊԵՏ. ԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀՍՍՌ-Арм. ССР
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ
им. А. Мясникяна
59881-66

ИНСТИТУТА ВОСТОКОВЕДЕНИЯ
Академии Наук СССР

## ՊԻՈՆԵՐ

1. Ակտիվ կերպով մասնակցիր ֆորպոստի աշխատանքներին։ Կատարիր ֆորպոստի բոլոր վորոշումները։

2. Ֆորպոստի ժողովներում հայտնիր այն բոլոր բացերը, թերությունները, վորը նկատում ես դպրոցում, վորպեսզի կարելի լինի ընդհանուր ուժերով ուղղել։

3. Ամեն կերպ ոգնիր աշակերտական խորհրդի աշխատանքներին։ Մասնակցիր դպրոցի խմբակների աշխատանքներին, Թխթակցիր պատի լրագրին։

4. Պայքարիր անդիսցիպլինա-
րության և դասերից փախչելու
դեմ։

5. Լավ սովորիր։ Քո հինգեր-
րորդ օրենքը ասում է՝ «Պիոները
ձգտում է գիտության գիտու-
թյունը և կարելիությունը ուժ է
բանվոր դասակարգի պայքա-
րում»։

6. Սերտ, ընկերական կապ
ստեղծիր վոչ պիոներ աշակերտ-
ների հետ։ Հիշիր չորրորդ օրենքը՝
«Պիոները կազմակերպում է իր
շրջապատի յերեխաներին և նը-
րանց հետ մասնակցում շրջա-
պատի կյանքին։ Պիոները բոլոր
յերեխաներին օրինակ է»։



7. Աշակերտներին մասնակից
արա պիոներական, կոմյերիտա-
կան հավաքույթներին, ցերե-
կույթներին, տոնակատարու-
թյուններին։

8. Ոգնիր դասերից թույլ ըն-
կերներին պարապելու համար,
չսպասելով, վոր նրանք քեզ
խնդրեն։

9. Պայքարիր ծխելու, հայհո-
յանքի դեմ։

10. Ազատ ժամերին աշխատիր
սովորեցնել ընկերներիդ խաղեր,
յերգեր, մարզանքներ։

11. Յեղիր ճշտապահ և սովո-
րեցրու մյուսներին ել այդպես լի-
նել։ Գրքերդ կարգի բեր։ Այսօր-

ժա գործդ վաղվան մի թողնիր։

12. Տարածիր «Պիոներ» հանդեսը և «Ավանգարդը» աշակերտների մեջ։

13. Մյուս ընկերներիդ հետ միասին հետևիր դպրոցում մաքրության։

14. Խնդիր դրեք և կազմակերպեք ձեր դպրոցում նախաճաշիկ ամբողջ աշակերտության համար, դա անհրաժեշտ է նրանց առողջությանը։

---

Հաստատված է Հ. Լ. Կ. ՅԵ. Մ. կազմ. բյուրոյի նիստում.— 1 նոյեմբ. արձանագրութ. № 29։

# ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

# ՊԻՈՆԵՐԱԿԱՆ ՖՈՐՊՈՍՏԻ

1. Աշխատանքի միասնական դպրոցներում (առաջին աստիճանի, յոթնամյա և իննամյա), վորտեղ կան յերեք հոգուց վոչ պակաս պիոներներ և հոկտեմբերիկներ տարբեր բջիջներին կցված կոլեկտիվներից, կազմակերպվում է պիոներների համախմբություն, **պիոներական ֆորպոստ**, անունով։

2. Գյուղական դպրոցներում ֆորպոստ կազմակերպվում ե այն դեպքում, յերբ տվյալ դպրոցում սովորում են տարբեր բջիջներին կցված կոլլեկտիվներից։ Իսկ յերբ դպրոցում սովորում են տարբեր կոլլեկտիվներից պիոներներ, վորոնք կցված են ԼԿՅԵՄ մեկ բջիջի, այնտեղ ֆորպոստ չի կազմակերպվում, աշխատանքը տարվում ե ամբողջ աշակերտության և պիոներների կողմից։

3. Ֆորպոստը կոլլեկտիվ չե։ և այդ իսկ պատճառով պիոներներ ընդունելու և դուրս անելու իրավունք չի վերապահվում նրան։

**Ծանոթություն.**— Դպրոցական աշա-



կերտները, վորոնք ցանկանում են մտնել պիոներական կազմակերպության մեջ դիմում են տալիս համապատասխան կոլլեկտիվին։ Այդ գործում Ֆորպոստը նրանց հարկ յեղած ցուցմունքներ ե տալիս։

4. Ամեն մի ֆորպոստ կցվում ե ԼԿՅԵՄ մեկ բջիջի, միաժամանակ նաև այն կոլլեկտիվներին, վորոնք կից են տվյալ բջիջին։ Պիոներական ֆորպոստի հիմնական ղեկավարությունը ընկնում ե տվյալ բջիջի վրա։ Բջիջն իրեն կից ֆորպոստի գործնական աշխատանքները ղեկավարելու համար առաջադրում ե իրեն կից կոլլեկտիվների կուլվարներից մեկին վորպես ֆորպոստավար։

Ֆորպոստավարը պարտավոր է ներկա լինել ֆորպոստի ժողովներին, պրեզիդիումի նիստերին, նա պետք է մասնակցի նաև դըպրոցի մանկավարժական խորհրդակցություններին և այլն։ Ֆորպոստավարը դպրոցում տարած իր աշխատանքների համար պատասխանատու չէ բջիջի առաջ։

Ծանոթ.— Յեթե այս կամ այն պատճառով հնարավոր չէ կոլվարներից մեկին առանձնացնել, բջիջը կարող է վորպես ֆորպոստավար ընտրել կոմյերիտականներից մեկն ու մեկին, վորը կարող կլինի ղեկավարել ֆորպոստի աշխատանքները։

5. Պիոներական բյուրոները ֆորպոստների աշխատանքները



ղեկավարում են ԼԿՑԵՄ բջիջների միջոցով, լսելով հաշվետվություններ ֆորպոստների աշխատանքների մասին, պարբերաբար հրավիրելով ֆորպոստների, նրանց պրեզիդիումների խորհրդակցություններ և այլն։

6. Ֆորպոստ կազմակերպելու համար, գումարվում է տվյալ դպրոցի պիոներների ընդհանուր ժողով, անց է կացվում պիոներական ֆորպոստի մասին զրույց, ապա ընտրվում է ֆորպոստի պրեզիդիում 3-5 հոգի։ (Յեթե պիոներ աշակերտների թիվը 10-ից պակաս է, ընտրվում է մեկ քարտուղար.

7. Ֆորպոստի պրեզիդիումն ընտրում է իրեն միջից նախագահ, վորը հանդիսանում է ֆորպոստավարի ոգնականը և քարտուղարը։ Պրեզիդյումի նիստերը հրավիրվում են վոչ շուտ, քան շաբաթը մեկ անգամ։ Պրեզիդիումի նիստերին և ֆորպոստի ընդհանուր ժողովներին, ցանկալի յե մանկավարժական խորհրդի ներկայացուցիչի մասնակցությունը խորհրդակցական ձայնի իրավունքով։

8. Պիոներական ֆորպոստի ազդեցությունը ավելի կազմակերպված կերպով տարածելու համար՝ խմբերում սովորող պիո-



ներներից ընտրվում են մեկական կազմակերպիչներ, վորոնք ղեկավարվելով պրեզիդիումի ցուցմունքներով տանում են իրենց խմբում անհրաժեշտ աշխատանք։ Ֆորպոստի պրեզիդիումը պարբերաբար հրավիրում է խմբային կազմակերպիչների խորհրդակցություններ, վորտեղ քննություն են առնվում, ֆորպոստի կողմից դպրոցում տարվելիք աշխատանքների վերաբերյալ խնդիրներ և տրվում են առանձին առաջադրություններ խմբակում տարվելիք աշխատանքների շուրջը։

9. Ֆորպոստի պրեզիդիումը

ղեկավարում է պիոներների, դպրոցում տարվելիք առօրյա գործնական աշխատանքները, խմբակային կազմակերպիչների միջոցով տալիս է պիոներներին վորոշ աշխատանք, ստուգում է նրա կատարումը, լսում է դպրոցական զանազան կազմակերպությունների և հանձնաժողովների մեջ աշխատող պիոներների հաշվետվությունները, կատարում է ֆորպոստի ընդհանուր ժողովի վորոշումները։

10. Պրեզիդիումը և խմբակային կազմակերպիչները վերնտրվում են ուսումնական տարվա մեջ յերկու անգամ։



11. Ֆորպոստը դպրոցում պետք է ունենա իր աշխատանքների ընդհանուր ծրագիր (հարմարեցված ուսումնական տարվա յեռամսյակներին) հիմնվելով պիոներական կոլլեկտիվի, դպրոցական խորհրդի աշխատանքի ծրագրի և դպրոցական ինքնավարության խնդիրների վրա։

12. Ֆորպոստի ընդհանուր ժողովները հրավիրվում են յերկու շաբաթը մեկ անգամ, վորի վորոշումները պարտադիր են բոլոր պիոներների համար։

13. Ֆորպոստի ամբողջ աշխատանքը (ընդհանուր ժողովներ և այլն) պետք է տարվի դպրոցա-

կան պարապմունքներից դուրս ակումբային օրերին, պիոներական ազատ ժամերին:

14. **Պիոներական Ֆորպոստի խնդիրները դպրոցում** ա) կազմակերպված ձևով դպրոցական աշակերտության վրա տարածել պիոներական ազդեցությունը, բարձրացնել պիոներների անհատական ուսուցումը, պայքարել պիոներ աշակերտության ծանրաբեռնման դեմ:

բ) մասնակից անել դպրոցին շրջապատող հասարակական-քաղական կյանքին, կապելով դպրոցը մոտակա գործարանի, արտադրության հետ և կանոնավորել



նրա կապը հասարակական կազմակերպությունների հետ՝ պիոներական, կոմյերիտական, կուսակցական, պատգամավորուհիների խմբակի, պրոֆմիության, գյուղում՝ գյուղխորհրդի, փոխոգկոմի և այլն: Դպրոցին մասնակից անել անցկացվելիք կամպանիաներին, տոներին և հասարակական անհրաժեշտ աշխատանքներին:

գ) Նպաստել աշակերտության քաղաքական-կուլտուրական մակարդակի բարձրացմանը, կանոնավորել դպրոցի ինքնակազմակերպությունը (մասնակցել կոմիսիաներին, խմբակներին և

այլն) նորմալ փոխհարաբերություն հաստատել պիոներ և վոչ պիոներ աշակերտների միջև։

դ) շաղկապել դպրոցի աշխատանքները պիոներականի հետ և ընդհակառակը։ Աշակերտական և դպրոցական օրգաններին ծանոթացնել պիոներական կազմակերպության աշխատանքների հետ, մասնակցել դպրոցական ծրագրերի մշակմանը և այլն։

յե) օգնել ուսուցիչներին և դպրոցական խորհրդին դպրոցական շինարարության գործում, օգնել ուսումնական-մանկավարժական աշխատանքների կանոնավորմանը։ Պայքարել մանկա-



վարժների և աշակերտների փոխհարաբերության մեջ և գոյություն ունեցող հին մնացորդների դեմ։

15. Ամբողջ աշխատանքները դպրոցում ֆորպոստը անց է կացնում աշակերտական ինքնավարության գծով, նրա զանազան օրգաններում ընտրված պիոներների միջոցով և դպրոցական խորհրդի գծով վորտեղ մտնում է ֆորպոստավարը վճռական ձայնի իրավունքով (այնտեղ, վորտեղ ֆորպոստ չկա դպրոցական խորհրդի մեջ մտնում է կոլվարը)։ Դպրոցական խորհրդում ֆորպոստավարը անցկացնում է պիոներական ֆորպոստի վորոշում-

ները և բջիջի տված դիրեկտիվները։

16) Աշխատանքի ընթացքում դպրոցական խորհրդի և պիոներական ֆորպոստի միջև առաջացած կոնֆլիկտները լուծում է ԼԿՅԵՄ բջիջը, պիոներական բյուրոյի և լուսբաժնի հետ միասին։

17. Այն դպրոցներում, որտեղ կա ԼԿՅԵՄ բջիջ կամ ֆրակցիա պիոներական ֆորպոստը համաձայնեցնում է նրա հետ իր ամբողջ աշխատանքը, բացի այդ տվյալ բջիջի կամ ֆրակցիայի բյուրոյի անդամներից մեկը կըցվում եֆորպոստի պրեզիդիումին։

ՊԵՏ. ԿՄՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос Библиотека

ՀՀ Ազգային գրադարան
NL0195649

ԳԻՆՆ Է 2 ԿՈՊ.